ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի № 23 արձանագրային որոշման հիմքերով << Ընդդեմ գենդերային բռնության >> ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզում 2012թ. կատարված աշխատանքների մասին 15.01.2013թ.

№	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	ՀՀ կառավարության << Ընդդեմ գենդերային բռնության >> ազգային ծրագրի քննարկում և մարզպետարանին առաջադրվող խնդիրների վերահսկում	Ծրագիրը քննարկվել է մարզային հնաձևաժողովում 2012թ. փետրվարի 8-ին / արձանագրություն №1, կետ 2/ և մարզիտորհրդում, մասնակցել են համայնքների ղեկավարներ և հանրակրթական դպրոցների տնօրեններ: Համայնքների, կրթական և առողջապահական հիմնարկների ղեկավարներից պահանջվել է սեղմ ժամկետում մարզպետարանի համապատասխան բաժին ներկայացնել բացահայտված բռնության յուրաքանչյուր դեպք, հանձնարարվել իրավաբանական բաժնին համապատասխան օգնություն ցույց տալ տուժողներին: Մարզային հանձնաժողովին հանձնարարվել է գենդերային բռնության յուրաքանչյուր դեպք դարձնել քննարկման թեմա:	ֆինանսավորում չի պահանջվել
2.	Մարզում գենդերային բռնության ենթարկված անձանց բացահայտում և վիճակի վերլուծություն	2012թ. մարզում բացահայտվել է գենդերային բռնության 6 դեպք, կազմակերպվել է քննարկում ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ, տրվել են համապատասխան լուծումներ: Բռնման է ուղարկվել 2 հոգի, դատական գործ է հարուցվել 1-ի նկատմամբ, ոստիկանական հսկողություն է սահմանվել 3 ընտանիքի նկատմամբ:	ֆինանսավորում չի պահանջվել
3.	Մամուլի միջոցով գենդերային բռնության բոլոր ձևերի լուսաբանում	Մարզային <<Վարդաձոր >> թերթում տպագրվել է ՀՀ կառավարության << Ընդդեմ գենդերային բռնության >> 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի առանձին հատվածներ՝ մեկնաբանություններով	ֆինանսավորում չի պահանջվել
4.	Մարզում գենդերային բռնության ենթարկված անձանց խորհրդատվական կենտրոնի ստեղծում մարզպետարանում	Ստեղծվել է կենտրոն, որում ընդգրկվել է 2 իրավաբան, 1 հոգեբան, 1 մանկավարժ և ՀԿ-ի 1 ներկայացուցիչ: 2012թ. խորհրդատվական կենտրոնին օգնության համար դիմել է մարզի 13 բնակիչ:	ֆինանսավորում չի պահանջվել

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ
բաժնի պետ Վ.Իսպիրյան